ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԷՎԵԼԻՆԱ ՋԱԴՈՅԱՆ

Հուշագրությունն ընդհանրապես գրական գործունեության հին ուղղություն է: Այն իր զարգացման ընթացքում կրել է ամենահնարավոր փոփոխությունները. ունեցել է մեծ հանրաճանաչություն, ենթարկվել է լայնածավալ տարածման և հանիրավի մոռացության մատնվել: Լինելով արտակարգ բազմատարր ու բազմատեսակ, հուշագրության ժանրը տարբեր ձևերով արձագանքեց ժամանակի խնդիրներին և յուրօրինակ ձևով արձագանքեց այդ ժամանակի ազդեցությանը: Աստիճանաբար անհետացան և հայտնվեցին նոր բնութագրեր, փոխվեցին երկրորդական գծերը, փոխակերպվեց ժանրային տարբերակվածությունը: Ներկայումս կարելի է առանձնացնել հուշագրության հինգ հիմնական ժանր՝ անձնական նամակագրություն (կամ նամակ), օրագիր (ռուսական հուշագրությունում նաև երկտող), ճանապարհորդություն-հիշողությունները (երբեմն նրանք բաժանվում են հիշողությունների և հուշագրությունների) և ինքնակենսագրությունները: Դրանցից վերջինս՝ ինքնակենսագրությունը, համարվում է ամենաերիտասարդ և ամենաքիչ կայացած ժանրը:

Իրոք, ինքնակենսագրությունն այն տեսքով, որով որ այն ներկայումս գոյություն ունի, գրական գործունեության զարգացող տեսակ է: Ժամանակակից ինքնակենսագրության հիմնական պահանջն է ներթափանցել հեղինակի անձի հոգեբանության մեջ և որպես անհատականություն նրան ի ցույց դնել: Սակայն ոչ բոլորին է, ովքեր գրում են ինքնակենսագրական ստեղծագործություն, ամբողջությամբ դա հաջողվում: Երևի այդ պատճառով շատ հետազոտողներ համարում են, որ յուրաքանչյուր ինքնակենսագրություն ունի իր առանձնահատուկ տեսակը և ուրույն ժանրը: Դրանում կա ճշմարտության որոշակի բաժին, քանզի ինքնակենսագրական ժանրին վերաբերող ստեղծագործությունները ձևով և բովանդակությամբ այնքա՜ն բազմազան են: Սակայն ժամանակակից ինքնակենսագրության մեջ արդեն բավականաչափ ցայտուն երևում են այն գլխավոր գծերը, որոնք ձևավորում են դրա սահմանները և առանձնացնում հուշագրությունն այդ ժանրից:

Հեղինակն իր դիրքորոշման պարզաբանման համար ընտրում է ինչ-որ դեր իր համար[1] և ստեղծում իր կյանքի մասին պատմելու որոշակի հայեցակարգ[2]:

Քանի որ ինքնակենսագրական տեքստերը կառուցվում են որպես պատմություն հեղինակի կյանքի կարևոր դրվագների մասին, ապա այս տեքստերին հատկանշական է հետահայական բնույթը: Սկզբում ինքնակենսագրական տեքստը կենսանկարագրման հաջորդական կառուցվածք էր, և ժամանակի արձանագրումը պարտադիր էր այս ժանրի համար: Այսինքն՝ ինքնակենսագրության հեղինակը, ամրագրելով տարեթիվը, ամիսը կամ օրը, պատմում էր անցյալի դեպքերի մասին: Հետագայում ինքնակենսագրական վեպը հարաբերվում է այնպիսի ժանրի հետ, ինչպիսին է հուշագրությունը, և իր վրա է կրում վերջինիս ազդեցությունը: Ինքնակենսագրությունը հեզհետե ձեռք է բերում գեղարվեստական տեքստի ձև, ստեղծագործությունը ներառում է ոչ միայն անցյալի մասին հիշողություններ, ինչպես ինքնակենսագրական տեքստում, այլև զգացմունքային գնահատականներ և հեղինակային մտորումներ: Հեղինակային «ես»-ը հանդես է գալիս ոչ միայն որպես խոսքի սուբյեկտ, այլ նաև ինքնանկարագրման և ինքնապատկերման օբյեկտ: Ինչպես նշում է Մ.Մ. Բախտինը. «...ինքնակենսագրության օբյեկտը ոչ միայն սեփական անցյալի աշխարհն է՝ հասուն գիտակցականի և ընկալման լույսի ներքո՝ հարստացված ժամանակային հեռանկարներով, այլև այդ աշխարհի նախկին գիտակցումը և գնահատումը (մանկական, պատանեկան, երիտասարդական)»: Այդ նախկին գիտակցումը պատկերման ճիշտ նույնպիսի առարկա է, ինչպես և անցյալի օբյեկտիվ աշխարհը: Այդ երկու գիտակցություններն էլ, բաժանված լինելով տասնամյակներ, նայելով միևնույն աշխարհին, սահմանազատված չեն խիստ... դրանք վերակենդանացնում են այդ առարկան, դրան հաղորդում ինքնատիպ դինամիկա, ժամանակային շարժ, գունավորում են աշխարհը՝ վերակենդանացնելով այն[3]:

Ինքնակենսագրական տեքստում համակցվում են երկու գիտակցական մակարդակ, որոնցից մեկը ենթադրում է շրջապատի և սեփական «ես»-ի

---

[1] **Pascal R**. Design and Truth in Autobiography. Cambridge: Harvard UP, 1960, p. 182.

[2] **Елизаветина Г.Г**. Становление жанров автобиографии и мемуаров // Русский и западноевропейский классицизм. М.: Проза, 1982, стр. 241.

[3] **Бахтин М.М**. Вопросы литературы и эстетики. Москва: Художественная литература, 1975, 455 с. Электронный ресурс: Режим доступа: http://fatum-san.ucoz.ru/zzz/pdf/783188.pdf (24.09.12).

նախկին գիտակցումը, իսկ մյուսը՝ ներկայիս հասուն գիտակցականը. տեքստի կառուցվածքում արդյունքում հնարավոր են երկու ժամանակային պլանների փոխազդեցություն և հարակցում (անցյալի պլանը և ստեղծագործության ներկայիս պլանը /այն ժամանակ-այժմ/), որը հնարավոր է դարձնում տեքստում միաժամանակ տարբեր տարածական դիրքորոշումների համակցում: Այս փոխներգործության զարգացումը վերջնականապես փոխակերպվում է առաջնային ժանրի՝ նախատիպի: Ինքնակենսագրական ստեղծագործությունը նախևառաջ հիմնված է առաջին դեմքի վրա (ես): Այս առումով ինքնակենսագրության սուբյեկտիվության ազդանշաններն են փաստի հիմնավորումը միայն սուբյեկտիվ կերպով, հեղինակի գնահատականների սուբյեկտիվ լինելը, հեղինակի տարածաժամանակային դիրքորոշումը:

Հեղինակի հիշողությունների իրացման գործընթացի արդյունքում հուշագրային տեքստում ստեղծվում է ինքնատիպ տարածաժամանակային խոսույթ, որի ընթացքում մի կողմից խախտվում է անցյալ դեպքերի զարգացման հաջորդականությունը, և հիշողություններն էլ ձեռք են բերում իմպուլսային, բռնկվող, հաճախ ենթագիտակցման բնույթ՝ հիմնված ասոցիացիաների հոսքի վրա, մյուս կողմից էլ տեղի է ունենում տարրերի խիստ ընտրություն՝ ներկայացված լեզվական միջոցներով:

Բացի այդ, ի տարբերություն ինքնակենսագրական տեքստի, որտեղ դեպքերի նկարագրությունը զարգանում է ըստ հաջորդականության, հուշագրային տեքստում հաջորդաբար են զարգանում հեղինակի հիշողությունները, որոնք կարող են չհամընկնել դեպքերի հաջորդականության հետ: Հեղինակը կարող է հիշել հաջորդ դեպքը, ապա անդրադառնալ նախորդին, հետո նորից հաջորդին, և այլն: Ահա այստեղ է, որ գործ ունենք հետահայման և առաջահայման հետ, որոնք գուցե սակավադեպ են ինքնակենսագրական տեքստերում, սակայն, վերը նշվածից ենթադրելով, բավականին հաճախ՝ հուշագրություններում:

Ինքնակենսագրական ստեղծագործությունում հեղինակը նպատակադրված օգտագործում է հիշողության վերաբերյալ լեզվական ազդանշաններ. «հիշում եմ, տեսնում եմ, միտս են գալիս, - as I can remember, Now I remember that, I can see, և այլն», որոնք ներմուծում են անցյալ փաստերի, դեպքերի, իրականության կամ իրավիճակի նկարագրումը, և որոնք վկայում են այն մասին, որ հեղինակն ընտրում է այս կամ այն դեպքը և ներկայացնում այն շնորհիվ հիշողության վերաբերյալ լեզվական միջոցների:

Հեղինակի հիշողությունները ոչ միայն ներկայացնում են «այն ժամանակի» օբյեկտիվ իրականությունը, այլև ներառում դրա գնահատականը, արտահայտում դրա տարբեր զգացումները՝ այսպիսով գեղարվեստականացնելով փաստը:

Հուշագրությունների հեղինակը նկարագրում է անցյալ ժամանակահատվածը տարբեր լեզվական միջոցներով: Օրինակ՝ հեղինակն ազատ է ընտրել բառային որոշ միավորներ, որոնք վերաբերում են իր կյանքի որոշակի ժամանակահատվածի, օրինակ՝ մանկության ժամանակահատվածին բնորոշ բառեր, որոնք ճանաչելի են միայն հեղինակի համար, կամ նույն ժամանակահատվածում և միջավայրում ապրող մեկ այլ մարդու համար: Բացի այդ, հուշագրությունների հեղինակը կարող է հուշագրային տեքստում ընդգրկել իր կյանքում կարևոր մարդկանց բնութագրերը և գնահատականները, որոնց այսուհետև կանվանենք հուշագրային կերպարներ: Իհարկե, անցյալի նմանատիպ նկարագրությունները զուրկ չեն սուբյեկտիվ-գնահատողական տարրերից և երանգավորումներից:

Հուշագրություններում հեղինակային մտադրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն վերը նշված լեզվական միջոցների, ազդանշանների և հիշողության վերաբերյալ այլ տարրերի սուբյեկտիվ ընտրության մեջ, այլև տարբեր ժամանակաձևերի կիրառման, ներկայից անցյալ, անցյալից ներկա, ապագայից անցյալ, անցյալից ապագա «ժամանակային ցատկերի» միջոցով:

Հեղինակի ժամանակային դիրքորոշումը կախված է հուշագրային տեքստին ներհատուկ անցյալ ժամանակաձևից, և ներկա ժամանակաձևերի կիրառումը խորապես ազդում է այդ դիրքորոշման վրա՝ առաջին հայացքից հակասելով հուշագրային տեքստում անցյալ ժամանակաձևի ավանդական կիրառմանը:

Գեղարվեստական ստեղծագործության ժամանակային ուղղվածությունը բնորոշում է հեղինակի կողմից օգտագործվող լեզվական միջոցների բնույթը: Զ. Յա. Տուրաևայի կարծիքով գեղարվեստական ստեղծագործության ժամանակային ուղղվածությունն այն ազդանշաններից մեկն է, որոնք առանձնացնում են առաջին դեմքի ստեղծագործությունը երրորդ դեմքի ստեղծագործության[4]: Առաջին դեմքի ստեղծագործության մեջ ամեն ինչ ուղղորդված է պատմողի ժամանակային փորձին: Ընդհանուր առմամբ այս դրույթը ճիշտ է ցանկացած ժանրի համար: Սակայն այս տեսակետը տարբեր կերպ է

[4] **Тураева З.Я.** Категория времени. Время грамматическое и время художественное. М.: Высшая школа, 1979, 119 стр.

արտահայտվում գեղարվեստական գրականության և հուշագրությունների մեջ: Եթե առաջին դեպքում առաջին դեմքի ստեղծագործության մեջ կարող են օգտագործվել անցյալի, ներկայի և ապառնիի ձևերը, ապա հուշագրային գրականության մեջ ներկա ժամանակաձևերը գործնականում չեն կիրառվում:

Ժամանակային տարբեր միաձուլումների շնորհիվ են հուշագրություններն առանձնանում այլ ժանրերից: Հեղինակը սովորաբար հրաժարվում է փաստերի և դեպքերի ճշգրիտ ժամանակագրական հաջորդականությունից հետահայման և առաջահայման շնորհիվ: Այլ կերպ ասած, պատմության զարգացումը հաջորդական չէ և բնութագրվում է մի ժամանակային հատվածից մյուսը և արտաքին, իրավիճակային աշխարհից դեպի հեղինակի ներքին աշխարհ կտրուկ անցումներով:

Ժամանակային տարբեր հատվածների միաձուլումը որոշակիացնում է բայական ժամանակների խաղը: Հուշագրությունների ժանրում տեղի է ունենում «հետո-այժմ»-ի հակադրությունը, քանի որ հեղինակի համար գոյություն չունեն խիստ սահմաններ անցյալի, ներկայի և ապագայի միջև: Ժամանակային շարունակելիության մասնատումը կրում է սուբյեկտիվ բնույթ և կապված է հիշողությունների հետ, որոնք իրար փոխարինում են որոշակի հաջորդականությամբ: Դրանց հիմքում հեղինակն անցնում է ներկայից (այժմ գոյություն ունեցող փաստերից) այլ ներկա (այն ժամանակ գոյություն ունեցող փաստերին), որոնք պահվում են նրա հիշողության մեջ, բայց որոնք իրենց արդիականությունը չեն կորցնում: Տեքստը կառուցվում է անցյալ ձևերից ներկա ժամանակաձևեր անցումներով, ընդ որում ներկա ձևերի նշանակությունը բարդանում է, իսկ գործառույթները շատանում են: Այս առումով թե՛ հեղինակը, թե՛ ընթերցողը գործ ունեն «պատմական ներկայի» ոչ ավանդական ժամանակաձևի հետ, որի կիրառումը հեղինակի կողմից նպատակային է: Վերջինիս գործառույթն է հեռավոր անցյալի մասին պատմությունները կենդանացնել, նոր շունչ հաղորդել դրանց և անցյալին վերաբերող իրավիճակների մասին տեղեկատվությունը հաղորդել այն ձևով, որ հուշագրությունների ընթերցողն ավելի մոտ զգա իրեն այդ դեպքերին: Այլ կերպ ասած, հուշագրությունների հեղինակն այդքան չի պատմում անցյալը, որքան մոդելավորում է անցածը. ընթերցողի առջև են հեղինակի մոտավոր հիշողությունները, որոնք ծնունդ են առնում նրա պատկերացումներում, և որոնք դառնում են տեքստ, այնուհետև խոսույթ ստեղծագործելու պահին, ընթացքում և դրա ավարտին: Ներկա ժամանակաձևերը, կիրառվելով հուշագրային նման համատեքստում, համատեղելի են դարձնում

տեքստի կերտման պահին ստեղծվող իրական ներկայի ազդանշանները և պատմական ներկան, որն էլ հեղինակի անցյալն է:

Ժամանակային տարբեր պլանների փոխազդեցությունը, որոնք ներառում են նաև եղանակավորման տարրեր, հուշագրությունը դարձնում են խիստ ծավալուն այն առումով, որ ուժեղացնում են հուշագրային կերպարների և հուշագրային տեքստում լեզվական միջոցների կիրառման բազմաբնույթությունը: Ինքնակենսագրական ժամանակի գծայնությունը ստացվում է անցյալի պատկերների հաջորդականության շնորհիվ: Այսպիսով, ինքնակենսագրականի փաստացիությունը հագեցած է գեղարվեստական տարրերով:

Եվ իրոք, մեր հոգեկան աշխարհը փոխկապակցված և փոխպայմանավորված գործողությունների շղթա է, և հիշողությունը նախևառաջ հիմնվում է այդ կապերի վրա: Այդ իսկ պատճառով հիշողության համար անցյալի հետ պարզ ձևով հարաբերվող փաստերն արդեն բավարար չեն. դրա համար անհրաժեշտ է համեմատություններ կատարել ժամանակի տարբեր հատվածների միջև: Ահա այս համեմատությունների մեջ ի հայտ է գալիս իրական և գեղարվեստական ժամանակի հարաբերակցությունը, հաճախ հակասությունը և, վերջապես, փոխպայմանավորվածությունը:

Դեպքերի օբյեկտիվ նկարագրումն անհնար է առանց ստեղծագործությանը ներհատուկ «գեղարվեստական» ժամանակի, որն անհրաժեշտ է ստեղծագործության զարգացման համար, ստեղծագործություն, որն ունի սեփական «քայլ» և «ռիթմ»[5]:

Կարելի է առանձնացնել երեք հիմնական չափորոշիչ, ըստ որոնց այս բովանդակությամբ և ձևով տարբեր ստեղծագործությունները միավորվելով հանդես են գալիս միևնույն ժանրի՝հուշագրությունների տակ:

1) Դրանցում անհրաժեշտ կարգով ներկա է հեղինակային «ես»-ը, ընդ որում, անցյալի իրադարձությունները կարևորվում են ոչ միայն հեղինակի՝ դրանց նկատմամբ սեփական վերաբերմունքով, այլև դրանցում հեղինակի անմիջական մասնակցությամբ:

2) Հուշագրային գրականությունը պատկանում է այսպես կոչված, փաստի գրականությանը: Սակայն ինչպես նշվեց վերևում, հուշագրությունները ոչ միայն հնարավոր է, այլև պետք է ներառեն սուբյեկտիվ տարրեր: Այս առումով հուշագրությունները փաստագրական ճշգրտությամբ, իհարկե, զիջում են փաստաթղթերին:

---

[5] **Гей Н.** Время входит в образ. М.: Известия АН СССР, ОЛЯ, 1965, 387 стр.

3) Այս ժանրի ստեղծագործության գլխավոր առանձնահատկությունը իրադարձությունների ներմուծման հետահայական բնույթն է: Սա վերաբերում է նաև օրագրերին, որոնցում իրադարձությունները, եթե նույնիսկ ներմուծվում են անմիջական տպավորության ներքո, այնուամենայնիվ նրանցում առկա տեղեկատվությունը նույնպես հետահայական բնույթ ունի) :

Լ. Պիրանդելոյի պիեսի հերոսներից մեկի արտահայտմամբ այստեղ ոչինչ նոր չի կարող պատահել, քան այն, ինչ արդեն ինչ-որ ժամանակ պատահել է, և որը հիմնականում հայտնի է շատերին: Ընդ որում, նկարագրվող դեպքերի հարաբերակցությունն իրական ժամանակի հետ այդպիսին է ոչ միայն հեղինակի, այլև ընթերցողի համար, որը գիտի, որ ոչինչ հնարավոր չէ փոխել, դեպքերը կզարգանան այնպես, ինչպես դրանք տեղի են ունեցել իրականության մեջ, հեղինակը չի կարող իր կամքով ձևափոխել դրանք (փոխակերպել), նա պարտավոր է հավատարիմ մնալ փաստին:

Փաստի նշանակությունը հուշագրային գրականության մեջ պայմանավորված է ոչ այնքան և ոչ միայն իրական, ոչ մտացածին լինելով, որքան այլ փաստերի հետ հարաբերակցությամբ, դրանց՝ հեղինակի կողմից վերլուծությամբ, և վերջիններիս՝ հեղինակի կողմից վերաիմաստավորմամբ: Այսպիսով, կարելի է ասել, որ հուշագրային գրականության մեջ ժամանակի հեղինակային սանդղակը կրում է երկու հիմնական ազդեցություն՝ մի կողմից դա փաստի ազդեցությունն է, որը տալիս է դրան օբյեկտիվ բնույթ, մյուս կողմից էլ դա ժամանակային շարունակելիությունն է (կոնտինուումը), որը հեղինակը փոխակերպում է ընդհատվածության (discontinuum), քանի որ բազմիցս խախտում է դեպքերի հաջորդականությունը: Նկարագրելով իրադարձությունները՝ հեղինակը չի հետևում իրական ժամանակին: Ի տարբերություն գեղարվեստական ստեղծագործության՝ հուշագրությունում սյուժեով արտահայտվող ժամանակը, այսինքն՝ սյուժետային ժամանակը կորցնում է իր հաստատունությունը: Այն կարող է դանդաղել, կանգ առնել նկարագրման համար կամ հետ շրջվել հետահայումով:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ինքնակենսագրական խոսույթում հարաբերվում են երկու իրողություն՝ ժամանակը և անհատը: Թե՛ ինքնակենսագրության և թե՛ հուշագրության էությունն է սեփական անցյալը ներկայում իմաստավորել, դիտարկել, իրացնել, այսինքն՝ զբաղվել ինքնավերլուծությամբ և ինքնահաղորդակցմամբ:

Այն անցյալ տեղեկատվությունը, որը հեղինակը կարևորել է ներկայում, նպաստում է նրա հուշագրության ստեղծմանը: Հուշագրությունն անցյալի

նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունք է, իսկ հուշագրության ժամանակային ուղղվածությունն ուղիղ համեմատական է հուշագրությունում առկա տեղեկատվության օբյեկտիվությանը և իրականության վերականգնմանը: Այս առումով տեղին է մեջբերել Բերնդ Նոյմանին. «Հուշագրությունը երևակայության միջոցով անցած և կրկին հիշվող իրականությունն իրականության մի այլ, նոր ձևի է հանգեցնում»[6]:

Հուշագրության ժանրի կարևոր առանձնահատկություններից են ոչ միայն նրա փաստացի լինելը, օբյեկտիվ իրականության մասին հեղինակի սուբյեկտիվ վերլուծությունները, այլ նաև ժամանակային պլանը, որին հատուկ է հետահայման և առաջահայման լայն կիրառումը, և իհարկե դեմքը, որով գրվում է հուշագրությունը: Այսպիսով, հետահայումը և առաջահայումն իրենց բազմաթիվ դրսևորումներն են գտնում հուշագրություններում: Հեղինակը բազմիցս հետահայման միջոցով վերադառնում է անցյալի հիշողություններին, հիշվող ժամանակահատվածին, իսկ առաջահայման միջոցով՝ ապագա իրադարձություններին: Հիշելու ժամանակակետը և հիշված ժամանակահատվածը կախված են հիշող և հիշվող Ես-ի անհատականությունից, որից բխում է ինքնակենսագրականին ներհատուկ առաջին դեմքով պատմելու ձևը: Ընդ որում, առաջին դեմքը նպաստում է հեղինակի և «հերոսի» նույնականացմանը: Պետք է նշել, որ հենց առաջին դեմքի օգտագործումն արդեն իսկ հուշագրության ժանրում հետահայման իրացման համար կարևոր նախապայման է, քանի որ հեղինակը գտնվում է հուշագրության հիշվող ժամանակահատվածում կամ հիշելու ժամանակակետում, իսկ նրա ստեղծած հերոսը հետահայման շնորհիվ տեղափոխվում է հիշված ժամանակահատված: Երրորդ դեմքի գործածումը կնշանակեր գիտակցաբար հեռացում վերապրածից կամ նկարագրվածից, և հետահայման, նաև առաջահայման դրսևորումները, դժվար է ասել, թե արդյոք այդքան հաճախ կհանդիպեի՞ն այդ դեպքում, թե՞ ոչ: Եթե Ես-ը, այսինքն՝ առաջին դեմքը, հնարավորություն է տալիս ճշմարիտ ձևով ճանաչելու տվյալ անհատականության ինքնավերլուծության, ինքնահաստատման և Ես դառնալու ճանապարհը, ապա հեղինակն իր անձն ավելի է մոտեցնում գրվածին: Ճիշտ է, երրորդ դեմքի կիրառումը հեղինակին ավելի շատ հնարավորություն է տալիս ստեղծագործելու, ներկայացնելու նոր իրավիճակներ և զարգացնելու անսպասելի դեպքեր, սակայն հուշագրություններում առավել նպատակահարմար է օգտագործել առաջին դեմքը. չէ՞ որ հեղինակը ոչինչ չի հորինում, նա

[6] **Neuman B**. Identität und Rollenywang. Zur Theorie der Autobiographie. Frankfurt: Atenäum, 1970, S. 328.

միայն վերհիշում է իր իսկ անցյալը (հետահայում) կամ կանխատեսում, թե ինչ է լինելու իր իսկ ապագայում (առաջահայում):

Ինգրիդ Այխինգերը գրում է հուշագրության՝ կենսապատումը բանաստեղծորեն ներկայացնելու հնարավորությունների մասին: «Հեղինակի հիշող Ես-ին հակադրվում է հիշված Ես-ը նրա ինքնահաստատման որևէ փուլում: Մեկնաբանությունը, դիտարկումը, մտորումներն ավելի են հստակեցնում հեղինակի դիրքորոշումը պատմածի նկատմամբ: Սակայն առանց հստակ մեկնաբանության էլ հասկանալի է հեղինակի գնահատականը. անցյալի այդ հատվածների ընտրությունը վերաբերում է ներկա ժամանակահատվածին: «Ավելի վաղ եղած» անհատին կարելի է ավելի լավ ճանաչել կենսագրության առանձին փուլերից, «հետագա» ժամանակի անհատի հստակ արտահայտությունն են անհատի ձևավորումը և հայեցակարգը»[7]:

Ինգրիդ Այխինգերի շարադրած մտքերից կարելի է եզրակացնել, որ հետահայումը հակադրվում է հուշագրության ներկա ժամանակի հետ, կամ ավելի կոնկրետ, այն ժամանակահատվածի, երբ գրվում է հուշագրությունը: Հետահայման շնորհիվ է, որ հեղինակի մտորումները, մեկնաբանությունները և դիրքորոշումները ստանում են արժեք կամ արժևորվում են հուշագրության ներկա ժամանակահատվածում, այսինքն՝ հուշագրությունը գրելու ժամանակ, այլ ոչ թե դրանում զետեղված անցյալում: Նաև կարելի է եզրակացնել, որ հետահայման շնորհիվ է, որ հեղինակը հուշագրություններում կարողանում է դիմել առաջահայման, քանի որ եթե չլիներ ապրածը, ապա հեղինակը չէր կարող ընթերցողին ներկայացնել իր կանխատեսումները (առաջահայումը): Հուշագրություններում առաջահայումը հետահայման մեջ է, ի տարբերություն այլ ժանրերի: Օրինակ՝ դետեկտիվ ժանրում առաջահայումն անկախ է դրսևորվում. այն չի հակադրվում անցյալին: Հեղինակը կերտում է առաջահայումը՝ ելնելով ներկայի փաստերից, մինչ հուշագրությունների ժանրում առաջահայումը հակադրվում է հուշագրության ներկային. այն կարող է բխել միայն անցյալից՝ հիմնվելով որոշ փաստերի, վերապրածի և հասկացությունների վրա:

Ռոյ Պասկալի կարծիքով հուշագրությունն այնքան է հետևում փաստերին, որ չի կարող վեր հանել «կյանքի բացարձակ ճշմարտությունը», այստեղ իհարկե նա ակնարկում է Գյոթեի ինքնակենսագրության հայեցակարգը: «Ինքնակենսագիրը չի կարող ո՛չ ուրիշ մարդ դառնալ, ո՛չ էլ ինքն իրենից հեռու

[7] **Aichinger I.** Künstlerische Selbstdarstellung: Goethes ,,Dichtung und Wahrheit,, und die Autobiographie der Folgezeit. Frankfurt: Lang, 1977, S. 170-199.

փախչել»[8],– գրում է Պասկալը և դրանով իսկ հանդես գալիս Վիլհելմ Դիթեյի և Գեորգ Միշի ինքնակենսագրության հերմենևտիկ տեսության դեմ, որոնք հենց ինքնակենսագրության մեջ կարևորում են «կյանքի ըմբռնումը»: Նրանք գտնում են, որ ինքնակենսագրության հիմքում ընկած է սեփական Ես-ի արտահայտման, ինքնաներկայացման ցանկությունը: Այս առումով հիշարժան են Թոմաս Բերնհարդի հետևյալ խոսքերը 1975թ. լույս տեսած ինքնակենսագրության «Պատճառը. ակնարկում» հատորի մեջ. «Մենք ստեղծվում ենք/ծնվում ենք, բայց չենք դաստիարակվում/ձևավորվում: Իրենց ամբողջ բթամտությամբ մեր ստեղծողները՝ մեզ ծնելուց հետո մեր դեմ են հանդես գալիս, ամբողջ մարդատյաց անզորությամբ և ավերում են արդեն իսկ կյանքի առաջին երեք տարիներին ամեն ինչ նոր մարդու մեջ, որի մասին ոչինչ չգիտեն, նույնիսկ երբ նրանք նրան անմիտ ու անպատասխանատու են դարձրել, նրանք չգիտեն, որ ամենամեծ հանցագործությունն են կատարել»[9]:

Ինչպես Գեորգ Գասդորֆն է նշում իր 1956թ. «Ինքնակենսագրական երկի սահմանները և նախադրյալները» հոդվածի մեջ, «Ինքնակենսագրության խնդիրն է կյանքի ամբողջականությունը կրկին վերականգնել ժամանակահատվածների միջոցով», և այն երբեք անցյալի կրկնություն չէ, այնպես, ինչպես եղել է[10]:

Հուշագրություններում հիշողությունը գծային է, այսինքն՝ ժամանակագրական, և իրադարձությունները ներկայացվում են որոշակի հերթականությամբ: Ժամանակային առումով հուշագրությունում առկա են մի քանի կառուցվածքային իրողություններ:

Հիշող Ես-ի /այսօր/ և հիշվող Ես-ի /այն ժամանակ/ ժամանակային մակարդակների միջև կա փոխադաձ կապ, ընդ որում, խոսքը ա) այսօրվա, բ) այն ժամանակվա և գ) դրանց միջև ընկած ժամանակահատվածի մասին է:

ա) We all think back to sir Winston Churchill as a man who bespoke confidence. There can be no question but that his presence in the British Isles, a presence of the spirit as much as of the mind is responsible for the fact that those Isles survive <u>today</u>.

---

[8] **Pascal R**. Die Autobiographie: Gehalt und Gestalt. Köln: W.Kohlhammer Verl., 1965, p.134.

[9] **Bernhard T**. Die Ursache. Eine Andeutung. München: Deutscer Taschenbuchverlang, 1999, S.96.

[10] **Gusdorf G**. Voraussetyungen und Grenzen der Autobiographie. // Niggl, Günter (Hrsg.) Autobiographie: Zu Form und Gescichte einer literarischen Gattung. Darmstadt: Wiss. Buchges, 1988, S.12-20.

բ) But Winston was a human being and there were moments when home of us could be sure of success.

գ) The phenomenally distinguished history of the British Isles reaches on through the present[11].

Ընդհանրապես հուշագրություններում առկա են մի քանի ժամանակային մակարդակներ. առաջին մակարդակը կազմում է այն ժամանակակետը, որից սկիզբ է առնում հիշողությունը, և որից էլ մի հետադարձ հայացք է գցում հեղինակն անցյալի որևէ ժամանակահատվածի վրա: Այստեղ մենք գործ ունենք հետահայման հետ:

Եթե այս հիշվող ժամանակը ժամանակագրական հաջորդականությամբ է ծավալված, ապա այն երկրորդ ժամանակային մակարդակն է: Հուշագրությունների հեղինակը լրացուցիչ ժամանակային մակարդակներ է ավելացնում՝ ժամանակից առաջ անցնելով (առաջահայում), կամ հետ դառնալով (հետահայում), որոնք ունեն բացատրական կամ պարզաբանող գործառույթ կատարվածի նկատմամբ, անկախ նրանից, թե նպատակը հուշագրային կերպարներից որևէ մեկին բնորոշե՞լն է, թե՞ ընթերցողի ուշադրությունն այս կամ այն երևույթի վրա հրավիրելը: Այն հատվածներում, որտեղ «այն ժամանակվանից», այսինքն՝ հիշվող ժամանակվանից ավելի վաղ կատարված իրադարձության մասին է հիշվում, այսինքն՝ մի երրորդ ժամանակային մակարդակ է խաղի մեջ մտնում, այդ հիշելը տեղի է ունենում շատ անգամ որևէ անձի հետ խոսակցության մեջ, որին հուշագրությունների հեղինակը հանդիպում է որոշ ժամանակ անց: Նախանցյալի այս հիշողություններն «այն ժամանակվա» երրորդ ժամանակային մակարդակի հետ փոխկապակցված են: Հուշագրությունների հեղինակը կարողանում է պահպանել «այն ժամանակվա ներկան» և կապել ավելի վաղ կատարվածը իր «ներկայի» հիշողությանը: Ժամանակի կարևորումը հուշագրությունում արտահայտվում է նրանով, որ որոշակի ժամանակահատվածներ հատուկ ընդգծվում և շեշտվում են, քանի որ վերջիններս տեղեկատվություն են պարունակում հեղինակի համար կարևորագույն կամ ճակատագրական իրադարձությունների մասին: Վերը շարադրվածից պարզ է, որ ինքնակենսագրական տեքստը կամ հուշագրությունն այն գրող անհատին բացահայտելու և հասկանալու նպատակ է հետապնդում:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ չնայած հուշագրություններում տեղի է ունենում հեղինակի կողմից տարբեր ժամանակային մակարդակների

[11] Eisenhower D. *At Ease* // Reader's Digest Condensed Books, Volume 3., New York: Pleasentville, 1967, p.574.

ներմուծում, հուշագրության ժամանակագրական հերթականությունը չի խախտվում: Այսինքն՝ հետահայումը կամ առաջահայումը չեն խախտում ժամանակագրական հերթականությունը: Նրանք միայն ընդհատում են այն՝ շեշտելու այս կամ այն տեղեկատվական տարրերը, այսպիսով շարունակելիության կարգը վերածելով ընդհատվածության կարգի:

Հեղինակը երբեմն բացահայտորեն, երբեմն էլ անուղղակիորեն միջամտում է պատմության և դեպքերի զարգացման բնականոն ընթացքին: Առանց այս միջամտության հնարավոր չէ պատկերացնել հուշագրության ժանրը: Հեղինակը չի կարող ազատվել «իր մեկնաբանությունից» լինի դա գիտակցաբար, թե ոչ, քանի որ հուշագրության նպատակն անցյալն օբյեկտիվորեն վերականգնելը չէ, այլ այն սուբյեկտիվորեն ներկայի տեսանկյունից մեկնաբանելը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ յուրաքանչյուր ինքնակենսագրության կամ հուշագրության հետևում կանգնած է անհատը՝ ինքնատիպությամբ, ներաշխարհով և բնավորության գծերով: Եվ քանի որ ինքնակենսագրությունը ստեղծվում է հեղինակի վերապրած իրականության հիման վրա, ապա դրա մեջ միավորվում են հուշագրության հեղինակի անհատականությունը և նրա իսկ կողմից ձևավորված կերպարը՝ դառնալով տվյալ հուշագրության հերոսը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածն անդրադառնում է ինքնակենսագրական ժանրի ենթաժանր հուշագրությունների ժանրային առանձնահատկություններին: Քննության են առնված հուշագրության գեղարվեստական առանձնահատկությունները ժամանակի կարգի հետ սերտ առնչությամբ, հուշագրության որպես փաստ-տեքստի հարաբերակցությունը գեղարվեստական տեքստի հետ և հեղինակի դերը այդ ժանրի կերտման գործընթացում:

Բանալի բառեր - հուշագրություններ, ինքնակենսագրություն, գեղարվեստական տեքստ, փաստ, հեղինակ, հետահայում, հիշողություններ, ժամանակային կարգ, շարունակելիություն, ընդհատվածություն, տեքստ, ժանր, խոսույթ, ներկա, անցյալ:

КАТЕГОРИЯ ВРЕМЕНИ В ЖАНРЕ МЕМУАРОВ: ХУДОЖЕСТВЕННЫЙ ПОДХОД

ЭВЕЛИНА ЗАДОЯН

Данная статья относится к поджанру мемуарного автобиографического жанра. В данной исследовательской работе рассматриваются особенности художественного мемуара в тесной связи с категорией времени, а также соотношение мемуара как факт-текст с художественным текстом и роль автора в создании этого жанра.

Ключевые слова - Мемуары, автобиография, художественный текст, факт, автор, ретроспекция, воспоминания, автокоммуникация, категория времени,континуум, дисконтинуум, текст, жанр, дискурс, настоящее, прошлое.

A FICTIONAL APPROACH TO MEMOIRS IN THE CATEGORY OF TIME

EVELINA ZADOYAN

This article considers the distinctive features of the autobiographical genre in memoirs. These features are studied in close relation with the time factor. The connection of memoirs with actual facts and fictional ones as well as the role of the author in creating this genre are also considered.

Key words - Memoirs, autobiography, fiction, fact, author, retrospection, recollections, time category, continuum, discontinuance, text, genre, discourse, past, present.